

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով աշխատանքը, համառոտակի նշենք այն հիմնական գծերը, որոնք բացահայտվեցին վերը: Հաշվի առնելով այն, որ տեխնոլոգիական գործընթացներն արհեստների զարգացման ընթացքում ունեին սոսկ կենցաղային պահանջմունքների բավարարման նշանակություն, որ բնական այնպիսի տարրեր, ինչպես երկաթը, կրակը, ջուրը, անհրաժեշտ էին աշխատանքային շղթայում, չի կարելի անտեսել դրանց հետ կապված այն բազում փաստերը, որոնք գալիս են ապացուցելու մեղօրյա մտածողության համար անսովոր մի երևույթ, որ հնամենի ժամանակներում արհեստները բնության հետ միաձուլ ապրելու մարդու նախնական բազում դրսևորումներից էին: Հարցին այս առումով մոտենալու դեպքում, արհեստների մասին մեր այսօրվա պատկերացումները կտրուկ շրջվում են: Նկատելի է դառնում տիեզերական ներդաշնակության գաղափարը, որն ընկած է հնամենի արհեստների միստիկ-մոգական գործառույթի հիմքում: Մտածողության այս համալիրում բնական տարրերի նկատմամբ նյութականացված մեղօրյա պատկերացումները, որոնց շնորհիվ դրանք մեզ համար գուտ կիրառական նշանակության և ֆիզիկական ներգործության գործառույթ ունեն, հանդես են գալիս որպես ոգեղեն երևույթներ և նման պահանջներ բավարարելու միջոցներ: Սա էլ հնադավորություն է տալիս պարզ պատկերացում կազմել և հասկանալ այն փաստը, որ հնագույն երկաթե առարկաները մինչ երկաթի դարը, երկար ժամանակ մոտ երեք հազարամյակ, ունեցել են գուտ ծիսական նշանակություն: Իսկ ծիսական իմաստավորմամբ, ոգեղեն առարկաների պատրաստման գործընթացն անպայման պետք է նույնպես ծիսական իմաստ ունենար: Հակառակ դեպքում այդ ծիսական առարկաները չէին կարող ունենալ այն ուժը, որպեսզի ծառայեին իրենց նպատակներին: Տեխնոլոգիական գործընթացների խորհրդանշանային իմաստավոր-

ման բացահայտումն օգնում է հասկանալու նաև դարբնի և նրա գործիքների խորհրդանշանային իմաստը: Դարբինը մեր աչքում դառնում է ոչ միայն սովորական իրեր պատրաստող վարպետ, այլ հանդես է գալիս մի շարք երկնային, գերբնական հատկանիշներով օժտված էակի դերում, դրսևորելով միաժամանակ *ամպրոպամարտիկի արարաչագործի* գործառույթներ: Այս առումով հասկանալի է դառնում նաև նրա գործիքների վերագրվող անսովոր իմաստավորումը: Նրա մուրճը իմաստավորվում է կայծակնային և ֆալուսային նշանակությամբ, իսկ զնդանը ստանում է *Տիեզերական ծառի* կերպ՝ աշխարհի կենտրոն, որտեղ ռախվում են չար ու բարի ուժերը, գոհվում երկվորյակները և, վերջապես, այդտեղ է իրագործվում արարչությունը:

Մարդկային մտածողության մեջ կատարված փոփոխությունը, որը հոգեբանների վկայությամբ բնությունից մարդու առանձնանալու հետևանքն էր, փոխում է նաև մարդու վերաբերմունքը բնության նկատմամբ: Ահա այս շրջանում տեխնոլոգիական գործընթացները ստանում են գործնական, կենցաղային գործառույթներ և նախնական տեխնոլոգիայի տիեզերաբանական իմաստավորումը բաժանվում է դրանից, դառնալով տեխնոլոգիական գործընթացն ուղեկցող ծիսա-սովորության երևույթ: Այդ բաժանումը ժամանակի ընթացքում, այնպիսի կտրվածություն է ստանում, որ ամենկատ է դառնում տեխնոլոգիայի և ծեսի միջև եղած նախնական կապը: Ուստի և մեզ համար անընդունելի է ծիսա-սովորության երևույթները տեխնոլոգիայից առանձին, նրա հետ իմաստային կապից գուրկ «իռացիոնալ» երևույթ դիտելը: Մեր այսօրվա էմպիրիկ գիտական մոտեցմամբ, ծիսական երևույթը ռացիոնալ կհամարվեր, եթե դրա արդյունքում ստեղծվեր զոհն մեկ գութանի խով կամ մանգաղ: Բայց այն, որ այդ նույն ծեսը կարող էր մարդու հոգեբանության մեջ մեծանկության,

անվստահության պրոբլեմի լուծման ռացիոնալ դեր կատարել, որի արդյունքում հոգեբանորեն ամուլից մարդը կաշխատեր ավելի բարձր արտադրողականությամբ, համարվում է իռացիոնալ:

Տեխնոլոգիան ուղեկցող ծիսա-սովորույթային երևույթների ծագումը հանգեցրեց վերջիններիս կողմից տեխնոլոգիայի խորհրդանշային թեմատիկայի մասնատմանը, կապված բնության հետ պայքարելիս մարդկանց այս կամ այն հիմնախնդիրը լուծելու հետ:

Եվ, վերջապես, րազում խորհրդանշանները, դրանց թեմատիկան կապված են հենց իր մարդու հոգեբանության մեջ եղած գաղտնիքների հետ և այդ ամբողջ բարդ համակարգը, որը հանդիպեց մեզ վերը, ենթագիտակցորեն կոչված են լուծելու մարդու ներքին, հոգեբանական պրոբլեմները:

Անդրադառնալով արդեն ծիսակարգում ունեցած դարբնի տեղին ու դերին, կարելի է ասել, որ նախ, դարբինն իր հաստատումն տեղն ուներ համայնքի թե առօրյա և թե սրբազան կյանքում, երկուսում էլ հանդես գալով կենտրոնական դեմքերի շարքում: Նույն ման դիրքը պայմանավորված էր տնտեսական կյանքում ունեցած ազդեցիկությամբ և ծիսական առումով մյուս համայնիկների նկատմամբ առանձնահատուկ դերով:

Դա արտահայտվում էր նաև համայնքի տարածական կառույցում դարբնոցի կենտրոնական տեղադրվածությամբ: Դարբնոցն ուներ գյուղի կենտրոնին բնորոշ համակարգի հատկանիշներ՝ կիրառական-տնտեսական և սրբազան-ծիսական առումներով: Տարածական կենտրոն-ոչ կենտրոն սկզբունքով է կառուցված նաև դարբնոցի ներքին տարածքը: Նշված սկզբունքի հիման վրա դարբնոցի ներքին տարածքի կազմակերպման գործում կարևոր դեր էին կատարում նաև վերև-ներքև, աջ-ձախ, ներս-դուրս տարածական հակադրամիասնությունները:

Դարբինը համայնքի ծիսակարգում մասնակցում էր թե տոնացուցային և թե ծայրահեղ վոճակների կարգավորման հետ կապված ծեսերին: Տոնացուցային ծիսակարգում դարբնի մասնակցությունը կապված էր տիեզերական ռեակամոն կարգի նորոգման, ժամանակային ու տարածական կարգը պահպանելու հետ: Ծիսական կյանքում դարբնի

այդ դերը պայմանավորված էր նրա կերպարին բնորոշ հետևյալ գործառույթներով. *ա)* ամպրոպամարտիկ կամ նրա օգնական, *բ)* արարիչ (արարչագործ վարպետ): Դարբնոցային ծեսերին բնորոշ հիմնական ծիսա-առասպելական թեման *վիշապամարտն* էր, որը տեղի էր ունենում *Տիեզերական ծառի* ծիսական խորհրդանիշ դարբնոցի սրբազան կենտրոն զնդանի վրա: Տարբեր ծեսերում գործում են այդ թեմայի մի շարք տարբերակներ: Այսպես *«ուրբաթարուրների»* պատրաստման ծեսում» դրսևորվում են *դարբին-արև-վիշապ, դարբին-աղջիկ-վիշապ* թեմաները: Արտավագդի շոթայման ծեսում նորից կարելի է հանդիպել *դարբին-արև-վիշապ* թեմային: Ըստ ահա անձրևաբեր ծեսում առկա է *դարբին-աղբյուր-վիշապ* թեման: Մյուս երկու՝ *«Յուդայի աչքը հանելու»* և բուժական արարողության ծեսերում *ամպրոպամարտիկ-վիշապ* հակադրությունում դարբինը հանդես է գալիս մաքրագործողի գործառույթով:

Վերջին գլխում քննության առնելով դարբնոցային ատրիբուտների արտահայտությունը երազային խորհրդանիշներում և լեզվական մշաններում, ցույց են տրվում դրանց ենթատեքստային ընդհանրությունները: Դա հետապնդում է այդ միջոցով ավելի հիմնավորելու դարբնոցային մշակույթի էթնիկ բնույթը և արմատները:

Այսպիսով, հենվելով ծիսաառասպելական և լեզվական տվյալների վրա, կարելի է ենթադրել, որ դարբնոցային մշակույթին հայերը հավանաբար կարող էին ծանոթացած լինել երկաթի մշակույթի յուրացման ամենավաղ փուլում, հնդեվրոպական ընդհանրության տարանջատման նախնական փուլերից մեկում, ոչ ուշ քան երկոորդ հազարամյակի կեսերը: